


6. ՃԵՐՄԱԿ ՎԱՆՔ.

Ասիւթի նահանգին մէջ, Սոնակ քաղաքին մօտերը, Կարմիր Վանքէն (Տէյր էլ Անմէր) ոչ շատ հեռու, ասիւթին կանգուն է, թէև կիսակեր, Ս. Շնուտայի անուան նուիրուած այս հոյակապ տաճարը: Մեծ հաւանակամութիւն կայ որ այս եւս, Պատրի Իւլ Կէմալի օրէն Հայոց յանձնուած եկեղե-



(թիւ 3) Սոնակի ճերմակ-Վանքի արտաքին տեսարանը

ցիներէն մէկն եղած ըլլայ: Մեր այս կարծիքը հաստատող քանի մը օպացոյցներ կան: Սորանի մասը տաճարին չափ հին չ'երեւիր. ասնիքին վրայ զուրաէն աւելցուած Հայկական երեք փոքրիկ զմբէթները մասնաւորապէս կը յայտնեն թէ Հայեր յետոյ աւելցուցած կամ նորոգած են այդ կտորը: Սորանի կամարին նկարազարդութիւնը հայկական է ըստըզովին: Նկարիչը հան դրած է անցման դրով երեք արձանա-